

Ամբաս Բիւրօս

Կաթաղարանի «ՓիիՆիկ» Ի
Աղօթարանգրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՏԱՄՍԵԱՅ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Ե

ԱՐՏԱՍՍՉՍԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՏԱՄՍԵԱՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՊԼ. 6

ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

19 ՅՈՒՆԻՍ 1902

ԹԻԻ 1

ՄԵՐ ՊԱՏ. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

ԼՈՒՐՁ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆԸ ԿԸ
ՅԱՆՁՆԵՆՔ ՀԵՏՆԻՇԱԼ ԿԱՐԳԱԴՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ, ՁՈՐՍ ԸՐԻՆՔ Գ. ՏԱՐԵ-
ՇՐՁԱՆԻՆ ԱՌԹԻԻ.

1. Այս տարուան Ա. Թիւր միայն պիտի ղրկենք, փորձի համար, եգիպտաբնակ ազգայիններէն անոնց, որոնք դեռ բաժանորդագրուած չ'են ՓիիՆիկին. եթէ բաժանորդագրուել չ'ուզեն, կը խնդրենք որ Ա. Թիւէն իսկ ձրի յոգնութիւն մը կրեն Refusé ով ետ դարձընելու թերթը, որպէս զի չը դատապարտուինք թղթատարական և ուրիշ անտեղի ծախքերու. իսկ եթէ Ա. Թիւն ետ չը դարձընեն, զիրենք կը նկատենք կանոնաւոր բաժանորդ:

2. Մեր հին բաժանորդներէն անոնք որ դեռ Բ. Տարեշրջանին բաժանորդագիրը չ'են վճարած և սակայն կը փափագին նորոգել կամ ո՛չ իրենց բաժանորդագրութիւնը, կը խնդրենք որ անյապաղ ղրկեն մանսարքով

իրենց բաժանորդագրութեան պարտքը, որպէսզի այսուհետև աւելի կանոնաւորապէս ստանան թերթը:

3. Մեր հին ու նոր բաժանորդները, որոնք սրտանց փափաքող են ՓիիՆիկի յարատեւութեան, ներկայ Գ. Տարեշրջանին առաւաւելն 4 թիւը ստանալէ ետքը պէտք է փութան կանխիկ վճարել այս տարուան ալ բաժանորդագիրը, վստահ ըլլալով որ ՓիիՆիկը պիտի շարունակուի անընդհատ, նիւթական ու բարոյական զոհողութիւններու մէջ, չը նմանելով եգիպտոսի մէջ քանի մ'անգամ վառուած ու մարած ՓԱՐՈՍին:

4. Մեր բաժանորդներէն անոնք որ իրենց հասցէները փոխած են կամ կանոնաւորապէս չ'են ստանար թերթը, կը խնդրենք որ իրենց վերջին հասցէները հաղորդեն խմբագրութեանս քաղաքով մը:

Գ. ՏԱՐԵՇՐՁԱՆԸ

Կ'սկսինք այսօր ՓիիՆիկի Գ. Տարեշրջանը, կէս ամսու ընդհատումէ մը

եաքը Այս ընդհատումը, այնքան կարճատև, առիթ տուաւ, մասնաւորապէս Աղեքսանդրիոյ ու Գահիրէի մէջ, կարգ մը տարագէպ ու դիտաւորեալ զրոյցներու, որոնց հեղինակներուն միայն տրուած է զուարճանալ ուրիշներուն ազէտներովը: Այդ կարգի զրուցահանար պարոններուն գլուխը կը գտնուի դժբաղդաբար, ընթերցասէր հասարակութեան գլխին խոստումներու ոսկիներ ու մարգարիտներ տեղացող մարած Փարոսին դասալիք խմբագիրը: Այդ զուարճալի ու միանգամայն զուարճացնող պարոնը տարածայնէր է թէ փիլիսոփայ խափանուած է վերջնապէս: Ու նուիրագործելու համար իր սուտը, կարեկից շեշտ մ'ալ խառնէր է իր ձայնին մէջ՝ դէպ ի դժբաղդ խմբագիրը փիլիսոփայն, Փարոսի կարծեցեալ բաղդակից խափանուած փիլիսոփայն — զոր սակայն ատեն մ'ալ դ'որձեալ նոյն պարոնը չ'աւելցաւ անուանելու ասկիւստ քոչուս —, ոչ ուն այսպէս ի վերջոյ դադարուիլ շատ արդարացի գտե՛ր է. . . .:

Շնորհակալ ենք իրմէ որ մեզի առիթը կ'ընծայէ յայտարարելու մեր Պատ. ընթերցողներուն թէ՛ փիլիսոփայ խափանուած չէ, այլ պիտի հրատարակուի, կոխտեղով ամեն արգելք ու խոչընդոտ: Կը ցաւինք միայն թէ ինչո՛ւ Մամուլի մարդ մ'ըլլայ հեղինակը սուտ ու փուտ զրոյցներու, որոնք, կրնան թունաւորել կարգ մը միտքերու բարի տրամագրութիւնները: Իբր թէ քիչ ազետաբեր եղած ըլլային հայ Մամուլին, Փարոսի պէս շրջմոլիկ հուրերու յեղակարծ երևումն ու անհետացումը: Քանի՛ քանի՛ պարկեշտ բաժանորդներ արդեօք չը գայթակղեցան հայ Մամուլի արատաբեր ներկայացուցչի մ'այսքան աշկարայ աճպարարութեանէն. . . : Սակայն թողո՛ւնք Մամուլին երեսը սեցնող այս կարգի կենդանիները. մօրուտներու կոկոացող և

կեղերջաճայն բնակիչներ, ընկերային ճահիճներուն հին ու սովորական երգը դիտեն երգել անոնք. երգը կեանքի տիղմերուն ու փճացած մարդկութեան:

Մենք գործ չ'ունինք այդ ինկածներուն հետ, ճախնի թուլատարներ. . . թող գիշերները լուսնկային լսեցընեն իրենց կոկոացը. ու ցերեկները, հայհոյեն արեւին դէմ. . . :

Ու երբ կ'սկսինք Ք. Տարեշրջանը, հպարտութիւնը կ'ունենանք խորհելու թէ հաւատարիմ մնացած ենք մեր հրապարակային խոստումին, որ արդէն յանձնառութիւն կը նշանակէ ամեն պարկեշտ ու պարտաճանաչ մարդու համար: Կ'սկսինք ուխտեալ ու աւելի՛ համոզուած նուիրումով մը ճշմարտին, գեղեցկին, բարիին, արդարին ու օգտակարին: Ինչպէս ցարդ, նոյնպէս այսուհետեւ պիտի պաշտպանենք նոյն դատը, օրէնքին ու իրաւունքին դատը, կամայականութեան ու բռնաբարութիւն դէմ. . . :

Պիտի չը շեղինք արդէն գծուած ուղիէն, որ, դիտենք, քարուտ է թէև ու փշուտ, բայց դիտենք նաև թէ այդ ուղիէն պիտի երթանք դէպ ի գաւառներն ազատութեան. այդ ուղիին ապառաժներուն վրայ ու փուշերուն մէջ ինկան դաշափարին զինւորները, վէրքով ծածկուած մեծագոյն մարտիրոսները մարդկութեան. այդ ուղի՛ն կտրեցին անցան յաղթական մեծ ու պզտիկ ազգերուն վեհագոյն հերոսները, ու այդ ուղի՛ն պէտք է բռնեն անաչառ Մամուլին ախրյեանները. . . :

Բ. Տարեշրջանին սկիզբը, փորձեցինք պաշտպանել ժողովուրդին տարական իրաւունքները, կոյր հակառակորդներու, ցաւագար նախանձոտներու դասակներէ պաշարուեցանք. թվուկներ, որոնց սիրտը կը տրոփէ միայն ու միայն դրամին ու պաշտօնին դիմաց: Ազգային շահերէն ճառելու, ժո-

զովուրդը վտանգաւոր սաղարաններէ
զգուշացնելու, աղբային փրկութիւնը
փութացնելու պաշտօններ ստանձնած
իրենք իրենց գլխուն, խելաթիւրեցին
իրողութիւնները, պղտորելու համար
առողջ միտքերը: Մենք այդ ինքնա-
կոչ վարդապետն: րով ու փրկիչներով
այսուհետեւ զբաղելէ պիտի զգուշա-
նանք, որովհետեւ այդպիսիներուն հետ
չը խօսիր ուղղամտութիւնը: Այս շր-
ջանին մէջ պիտի ջանանք ուժ ու մը-
ղում տալ ամեն ազգօգուտ շարժումի,
որ նպատակ ունենայ ձուլելու մտա-
ւորական ուժերը, վերակազմելու քան-
դուած կառոյցները, ու ազնուացնելու
բարքերը: Վերջապէս, փիլիսոփայ
ջանքը պիտի կեդրոնանայ եզրագոտի
հայ երիտասարդութեանը թեւէն բըռ-
նելու մէջ, հանելու զանի տիղմէն ուր,
— բացառութիւնները յարգենք, — կը
տապալտրկի. գիտակցութիւնն ու հա-
մերաշխութեան ոգին — արթնցընել
անոր մէջ, ու օրին մէկը կրնալ բար-
ձրաձայն ըսել. «ԵՒԻՊՏՈՍԻ ՄԷՋ Ե-
ՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՊՐԻ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

ԷՍԹ ՈՒԷՍԹԻ

Բարիկ 31 Մայիս 1902

ՀԱՅ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՅԹԸ.

Մենք ինչպէս ծանուցեք էինք,
հինգօրեայ երեկոյ տղի ունեցաւ «Հայ
գեղարուեստական երեկոյթը» (*Soirée d'art
Arménien*) ի նպաստ Հայ որբերուն:
Գործակալութենէս ոչ ոք այնտեղ ներ-
կայ զսնուելով, զիբերապահ պաւսօ-
նէին պատուէր տուած էր *սեյնժօնով*
տեղեկութիւններ խնդրել այդ երեկոյթի
մասին, որպէսզի ուրբաք առտու կա-
նուխ հաղորդենք մեր բոլոր թերթե-
րուն: Գիբերուան ժամը տասն եւ կէսին,
մեր պաւսօնէին հաղորդած են հետեւ-

եալ տեղեկութիւններն որոց մէջը գրե-
նուող յատուկ անունները մենք շարժելով
— սրովհետեւ գրելու համար անունները
ծուռկած եւ բաւական սխալներ սպր-
դած էին անոնց մէջ — առաջ կը բե-
րենք:

«Հակառակ տեղացած սաստիկ
անձրեւին, հանդիմանականներու թիւը
400-450 հոգիի հասեր է, երեկոյթը
սկսեք է ճրանասացիի մը՝ Պր. Գ. Մու-
րէի մէկ բանաստուարեամբ: Այդ
բանաստուարեան խորագիրն է եղեր
«Հայ բանաստեղծութիւնը եւ գեղար-
ուեստը»: Բանաստուարեան ժամանակ
մագական լապտերով ցոյց տուած են
հայկական հարսարարութիւնը ներ-
կայացնող զանազան նկարներ եւ տե-
սարաններ:

Բանաստուարեանէն յետոյ տղի ու-
նեցեք է իսկական երեկոյթ — կոնցերտը,
որուն մասնակցած են — մեզ հաղոր-
դուած անուններէն — Տիկին Սըկոն Վե-
պէր՝ ճրանաստեղծութիւն. Տիկին
Տէլվէն՝ նոյնպէս ճրանաստեղծութիւն. Տիկին
Օրիորդ Փայազարա՝ ազատ
երգչուհի. իսկ արական սեռի արդիաս-
տեղէն՝ Պ Պ. Ֆիլիպ Կառնիէ՝ ճրան-
աստեղծութիւն, Ռամօ՝ Օստոնէն,
Ամիրեան՝ հայ երգիչ, Կոնկուառ Կիլ-
պէնկ՝ հայ դերասան:

Վերջին մասին մէջ երգուած են
հայերէն ժողովրդական երգեր. արտա-
սանուած են հայերէն հին եւ նոր բա-
նաստեղծութիւններ, որոնց շատերուն
ճրանստեղծութիւնն ալ կար-
դացուեք է:

Երեկոյթը դուրսէն էր, ինչպէս ը-
սինք, ճրանաստեղծութիւն Ակադեմիայի ան-
դամ պր. Էնկէպ Լավիսի եւ Բարիկի
երեսփոխաններէն հայաստեղ Պատան
Տրնի Գօշէնի հովանաւորութեան տակ:
Տելեֆօնը մեր պաւսօնէին իմացուց որ
թէպէտ պարտն Տրնի Գօշէն եկեր է ե-
րեկոյթին — պէտք է խոստովանիլ որ
այս ծնունդով, պաւսօնով, հարստու-

քեամբ, համբաւով, վերջապէս ամե-
նայն տեսակէտով բարձր անձնաւորու-
թիւնը միտ կ'անսարած է երբ բան մը
խոսացած է — բայց պարոն է՛նէսդ
Լավիս ահադեմականը չէ եկած, սա-
կայն իւր կիներ Տիկին է՛նէսդ Լավիս
հանդիսականներու մէջն է եղեր:

Հարցուած է — միտ տելեֆոնով
— թէ յայտնի ի՞նչ մարդիկներ կան
ներկաներուն մէջ: Պատասխանուած
է: — Ամբողջ հայ գաղթականութիւնը
(այս մեզ քիչ մը չափազանցուած կե-
րելի՛ ու՛ով հետեւ յայտնի է թէ Բարիգի
հայ գաղթականութիւնը բաղկացած է
կլոր թուով, հազար անդամներէ, մինչ
երեկոյթին մէջ 450-500 նոգի կայ ե-
ղեր. արդ կա՛մ «ամբողջ գաղթակա-
նութիւնը» բառը սխալ հասկցուած է
եւ կամ ճրանագիտներ չեն եղեր ըսել
է), ճրանագիտներու մէջէն աչքի իյ-
նող անձնաւորութիւններէն յիշուած է՝
Պ. Պ. Մէյէ բրոքէտօր հայերէն լեզ-
ուի Արեւելեան լեզուներու վարժարա-
նին մէջ եւ յաջորդ հանգուցեալ Գա-
ռիէոյի. Օպոյի՝ երաժշտութեամբ կը զբաղի
մասնաւոր կերպով: Կային անուուս
ուրիտ ճրանագիտներ, բայց անոնք մեզ
համար մեծ կարեւորութիւն մը չունին,
վասնզի մեզ՝ հայերուս համար դեռ
ժանօթ չեն իրենց հայասիրութեամբ
կամ հայանպաստութեամբ:

Մեր կողմնակի կերպով հաւաքած
տեղեկութիւններուն համեմատ երեկոյ-
թին գլխաւոր կազմապարտիչն է եղեր՝
«Անահիտ» հանդիսի խմբագիր պր. Ար-
շակ Զօյանեան: Որչափ կը յիշենք,
յիշեալ պարոնը, երկու երեք տարի ա-
ռաջ, հանամանն այսինքն մեր որբե-
րուն ի նպաստ ցերեկոյթ մը կազմա-
կերպեց, որո՛ւ մասին մենք ժամանա-
կին խօսեցանք. այն ցերեկոյթէն բա-
ւականին մեծ գումար մը մտաւ որբե-
րուն գանձանակը. այս երեկոյթէն ի՞նչ
հասոյթ գոյացաւ, կամ գոյանալու է,

այդ մեզ կ'իմացնէ ապագան: Մենք կը
ցանկաննք որ գումարը մեծ, խիստ մեծ
լինի, քանի որ խնդիրը մեր որբերուն
տուրջը կը դառնայ...:

7 Յունիս 1902

Բարիգի թերթերէն մին հետեւեալ
տեղեկութիւնը հրատարակեց այսօր,
որ ամենուն զարմանք պիտի պատճա-
ռէ: «Թիֆլիզի մէջ ուսուսողականու-
թիւնը ձերբակալեր է Սուլթանի քե-
ռորդին՝ իշխան Սապահէտօնը: Իշ-
խանն ամբաստանուած է՝ թէ կուզէ
եղեր: Հայաստանի մէջ ապստամբու-
թիւն մը առաջ բերել (Կովկասի մէ-
ջէն!):»

Սապահէտօն՝ որդի Մահմուտ
փաշայի, կարևոր դեր մը խաղաց, Ե-
րիտասարդ Թուրքերու Բարիգի մէջ
կազմած կ'օնկրէտին մէջ: Իշխանը Սէն
Փեթերսպուրկ պիտի շրջուի և հաւա-
նաբար պիտի արտաքսուի ուսական
հողէն: Ահա, այս է հեռագիրը, կար-
ծենք թէ բացատրութեան պէտք չէ,
այս լրոյն կատարեալ Canard մը լինե-
լուն վրայ ոչ ոք կ'երկբայի:

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹ ՊԵԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բացուելէ «Գող-Մժղօ» վէպին
բաժանորդագրութիւնը, դրուած Վաս-
պուրականի իրական կեանքից, սրից
գոյացած զուտ արդիւնքը պիտի յատ-
կանայ հայ որբերի օգտին: Գիրքը
բաղկանում է աւելի քան 150՝ երես-
ներից:

Սրանով յայտարարում եմ «Փիւ-
նիկի» յարգելի ընթերցողներին որոնք
հաճութեամբ կարդացին մեր «Նահա-
տակների դաշտում» և «Պարսկահայք»
յօդուածները, եթէ փափաքում են
ունենալ մեր սոյն պատմական վէպը
թող հաճին իրենց բաժնեգները խմբա-

գրութեան միջոցաւ հասուցանել մեզ հինգ զուրուշ ողջ գրամ իւրաքանչիւր բաժնի համար. իսկ Եգիպտոսից զուրս եղողները երկու ֆրանկ ուղարկելու են, որպէս զի ժամանակին բաժանորդագրութեան համաձայն ստանան գըրքերը:

Յայտարարութիւնն տալուց առաջ մի միայն Աղեքսանդրիայում 35 անձինքներ գրուեցին 63 բաժին երկու օրում և կանխիկ վճարեցին:

Եթէ երբէք կարացինք հրատարակուելիք գրքի սպառումով քաջալերութիւն գտնել ընթերցողներից և որբերին յուսացած օգուտը հասուցանել, հրատարակութեան պիտի տանք նաև մեր արդէն պատրաստուած «Աւալթաւալ» վէպը, որ բազկանում է աւելի քան 300 էջերից, և որը համարվում է շարունակութիւն «Գող Մժգո» ին, բայց տաճկահայ գրականութեամբ գրուած:

Ինչպէս ընթերցողները պիտի տեսնեն, իսկական անունս չեմ գրել գրքի կողքերի վրայ, վասնզի անուն կամ փառք չահելու մտքով չէ որ յանձն եմ առել այս պշխատասիրութիւնները գրական հրապարակի վրայ դնելու, այլ Երիթովի ճանապարհի վերայ ինկած վիրաւորեալից աւելի արգահատելի գրութեան դատապարտուած հայ որբերուն օգուտ ընծայելու և գաւառական կեանքի թագուն մնացած սովորութիւնները երևան հանելու կրկնակի պարտականութիւններով ի լոյս եմ բերում երկու գրքերս:

ՆՇԻԿ ԵՐԷՅ

ՔՐՈՆԻԿ

— Միթիւնկը, որ ամսէ մ'ի վեր մեձին ու պզտիկին խօսակցութեան նիւթ մատակարարեց, վերջապէս պիտի տեղի ունենայ տեղական կառավարու-

թեան արտօնութեամբ, ամսոյս 23 ին երկուշաբթի իրիկուն ժամը 9 ին, քաջաքիս ծովեզերեայ Բիրամիտ թատրոնին մէջ: Ահա՛ւատիկ աղղը:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՀԱՅԵՐ,

Քաղաքիս մէջ ԱԶԳԱՅԻՆ ՍՍՀ-ՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ բռնաբարման դէմ ՕՐԷՆՔԻՆ տիրապետութիւնը պահանջող

Մ Ի Թ Ի Ն Կ Ը,

ԱՐՏՕՆՈՒԹԵԱՄԲ ՏԵՂԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

պիտի գումարուի յառաջիկայ 10|23 Յունիս, երկուշաբթի գեշեր, ժամ 9 ին, «ԲԻՐԱՄԻՏ» ԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ:

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՄՈՒՏՔԸ ՁՐԻ Է անհատներու՝ եւ ՕԹԵԱԿՆԵՐԸ ընտանիքներու համար:

Տարակոյս չը կայ թէ Աղեքսանդրիոյ բովանդակ Հայ հասարակութիւնը պիտի փութայ գործնականապէս ցոյց տալ իր համակրանքը դէպ ի սոյն Միթիւնկը, ուր պիտի բանախօսեն կարող անձնաւորութիւններ: Թէ՛ բանախօսներուն և թէ՛ իրենց բանախօսութեան նիւթերուն վրայ պիտի գրենք այս շաբթուան մասնաւոր Յաւելուածով, որ պիտի հրատարակուի Միթիւնկին առթիւ:

— ՔԱՎԱՔՊԻ ԱՊՏՐԱՀՄԱՆ ԷՖԷՆՏԻ մեծահարուստ Բերիացի բանաստեղծը որ երկու տարիէ ի վեր Հալէպէն փախտական, Եգիպտոս ապաստանած էր, անցեալ շաբթուան մէջ յանկարծա՛մահ եղաւ:

Այ՛ աղնիւ Սուրիացին ազատութեան մարտիրոս մ'եղաւ: Թողլով իր տուն տեղը, ընդարձակ կալուածները,

չը կրնալով համակերպիլ ու կրել թուրք բռնապետութեան լուծը, արհամարհելով շքանշան, բարձ, պաշտօն, ամեն բան, հոս եկած էր մասնաւոր առաքելութեամբ, անկախութեան ոգին արթնցնելու և ազատագրութեան յոյսեր արծարծելու արաբ ժողովուրդին մէջ. սկսած էր արդէն կազմակերպել պատկառելի ուժ մը Սուլթանին Խալիվայոթեան դէմ. անձնական տպարան հիմնեց Գահիրէ, արաբերէն յեղափոխական գիրքեր հրատարակեց ի՛ր իսկ հեղինակութեամբ, հազարաւոր օրինակներ ցրուել տուաւ եգիպտոսի ամեն կողմը, մինչև իսկ Եէմէնի խորերը:

Հալէպի մէջ ամենէն յարգուած ու սիրուած, իր դիրքովն ու ծնունդովն, քաղաքական ամենածանր ամաստանութեան մը տակ, նետուեցաւ 1892 ին Հալէպի կեդր. Բանտը, ուր կային այն ատեն 50 ի մօտ Ձեթունցիներ ալ, Եպիսկոպոս, Վարդապետ, Քահանայ, Ուսուցիչ, ընդ որս այս տողերը գրողը, վաճառական, հողատէր, ևն: Հոն, Քավաքպին շուտով յայտնուեցաւ թունդ յեղափոխական մը, անկեղծ հայասէր մը, դժգոհ միւսլիման. մը: Ի՛նք եղաւ առաջինը մեզի ձեռք կարկառողներէն, ամեն կերպով դիւրացընելով ու արգիւնաւորելով մեր ներքին ու արտաքին հաղորդակցութիւնները: Նոյն տարուան մէջ Նախարարապետ կլատսթոնի ուղղուած երկու անուանի նամակներուն— որոնց երկու պատասխանագիրները ցարգ կը մնան Հալէպի կուսակալութեան ձեռքը — խորագրութեան մէջ դրաւ ի՛ր ալ աշխատակցութիւնը: Մէկ խօսքով, այս անսպասելի մահով արաբ սղատական աշխարհը կորսնցուց քաջամարտիկ ախոյեան մը, իսկ հայկական դատը՝ ճշմարիտ բարեկամ մը:

Մեր խորին վշտակցութիւնները մեծ հայրենասէրին ընտանեաց ու պարագաներուն:

ՍԷԼՎԱՃԵԱՆ, ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ԳԱՆՃԵԱՆ, ԱԲՐԱՀԱՄԵԱՆ և ԳԷՍԷՃԵԱՆ ընտանիքները դառն կորուստ մ'ունեցան յանձին իրենց մօր, հօրաքրոջ և ազգականին,

ՏԻԿԻՆ ԵՒ ՊՐԱԲՍԷ ՍԷԼՎԱՃԵԱՆԻ որ հանգեաւ ի տէր ամսոյս 17 ին ի Գահիրէ: Մեր խորին վշտակցութիւնները:

— ՀԱՅ ՆՈՒԱԳԱՄՈՒԱՅ ԽՈՒՄԲ Ին համար 30 ձեռք համազգեստ յանձնարարուած է տեղիս Շրայնի վաճառատան կեդրոնը Վիէննա: Այս լուրը, վաւերական աղբիւրէ մը քաղուած, կուգայ մասամբ չքմեղանցնել Տիար Լեւոն Նիզամեանի գլխաւոր դերակատարութիւնը «կեցցե՛ խնամակալաշրջան» ի կատակախաղին մէջ:

— Կ. ՊՈԼՍՈՑ հայաթերթերէն ոմանք, Արեւելք, Սուրհանդակ, ևն, Աղեքսանդրիայէն կեղծանուն ստորագրութիւններով քանի մը ստայօթթղթակցութիւններ հրատարակեցին վերջերս ու ալգային լուրերու բաժնին մէջ իրենց կողմէն այլ ընդ այլոյ մեկնութիւններ տուին տեղիս թաղընտրութեանց ու ալգային գործերուն վրայ: Յօդուածագիրները, թէև դիմակաւորներ, ծանօթ են մեզի իրենց ինկած բարքովն ու տխուր սաղանդովը. տեսակ մը մակաբոյժներ որոնք այսպիսի եղանակներուն երևան կուգան յաճախ, կարծես իրենց գծուծ գոյութիւնն արգարացնելու համար: Տեղիս հասարակութեան ուշիմ, օրինասէր ու գիտակից մասը, նողկանքով ու արհամարհանքով պիտի տեսնէ այդ հրատարակութեանց մէջ ճշմարտութեան խեղաթիւրումն ու զրէնքին բռնաբարումը նուիրագործելու ողորմելի ճիգի մը ցուցադրութիւնը:

Պատիւ մեր այդ պնակալէզ գրչակներուն, որոնք Վերթիւններու, Աղաւնիներու միջնորդութիւն ընել միայն գիտեն: Ու խենեշին այդ երգիչները կ'եննեն մեր ալգային ամենասուրբ աւանդներն ու նշխարները կ'առական...

— ԳԱՀԻՐԷԻ ԹԱՏԵՐ. ՀՐԱՉԵԱՅ
 ԽՈՒՄԲԸ կը շեշտէ իր գոյութիւնը: Անցած կիրակի մայրաքաղաքին Եգիպտական թատրոնին մէջ տուաւ «Վանայ Հայրուկներ» ու ներկայացումը, որ, կ'իմանանք, լաւ տպաւորութիւն մը թողած է. սիրող սկսնակները ցոյց տուած են բաւական ընդունակութիւն, ինչ որ գեղեցիկ ու փայլուն ապագայ մը կը խոստանայ այդ նորակազմ խումբին:

Սրտանց կը մաղթենք յաջողութիւն ու յարատեւութիւն Գահիրէի մեր թատերասէր երիտասարդներուն, որոնք, կը յուսանք, կոչուած են գնելու Եգիպտոսի հայ թատրոնին հիմերը: Փափագելի էր միայն որ մեր գեղեցիկ սեռէն ալ փութային մէկ երկու սկսնակներ երևնալ բեմը, հոն բերելով իրենց շնորհը, տաղանդն ու հրապուրը, ամբողջացնելու համար Հրայեայ Խումբը:

— ԱՐԱՔՍ ՀԱՅԿ. ՏՊԱՐԱՆԻ գրաշարներէն Տիար Զենոբ Ֆէնէրճեանի ընդ Օր. Զարուհի Պողոսեանի ամուսնութեան հանդէսը տեղէ պիտի ունենայ ամսոյս 22ին կիրակի իրիկուն ժամը 10ին, Շար-էլ-Ռակիպ բաշա Մահմուտիյէ փողոց, իշենց բնակարանը:

Մեր խնդակցութիւնները:
 X — ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻՆ ԵՂԲԱՅՐԸ Տ. Մարտիրոս Պիղեգիսի, պաշտօնեայ տեղիս Օսմ. Դրամատան, 3 ամսու արձակուրդով մեկնած է Աթէնք, ուր պիտի անցնէ իր ամսունային զգափոխութեան շրջանը:

— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏԱԼՈՒՏ ՁԱՐԴԵՐՈՒ մղձաւանջը նորէն կը ցցուի: Եւրոպական թերթերէն, ԹԱՆ, ԷՕՐՕԲԷՆ, ԲՐՕ ԱՐՄԷՆԻԱ, ԷՆ, ԼՐԶՕՐԷՆ կ'զբաղին հայկական խնդրով:

Թանէն կը քաղենք հետեւեալ հատուածները:

« . . . Ինչ որ ալ ըլլայ, նոյն իսկ

եթէ ջարդերը չեն վերսկսած կամ բարձրագոյն հրամանով դադարեցուցուած են, հայ բրիտանականները դարձեալ ոչ նուազ տանջանքներ կը կրեն հարկերու հաւաքման երեսէն: Մասնաւորապէս Մշոյ գաւառը թատր եղած է այս կարգի անուշի եղունկերու: Հարկահանները զօրքերով կ'երթան դիւղերը. այր ու կին կը մերկացնեն ու կ'ենթարկին զանոնք — ճիշդ ինչպէս որ Ամերիկացիք ըրին Փիլիպիններու բնիկներուն — ՋՈՒՐԻ ԽՆԴՐԻՆ, այսինքն անուշի չարչարանքի մը:

«Իրենց թշուառութեան խորէն, դժբաղդ հարկատուները չեն կրնար զերծ մընալ. կը բռնեն զանոնք, կ'առնեն կը տանին անոնց բոլոր կահկարասին, զործիները, մինչև իսկ անոնց անկողինները. բանալ կը նետեն ուր կը մնան 90 օր շարունակ: Այդ միջոցին, թուրք կամաւորներու հրօսակներ, որոնք ՃԱՆ ՊԻՉԱՐ (կեանքէն յոգնած) ի նշանակալից անունը կը կրեն, գիւղերը կը ցրուին, կը թալլեն, կ'սպաննեն, առանց երբէք արգելուելու կամ նեղուելու կանոնաւոր գնդերու կողմէն: Մուշը զբաւոյ 10 վաշտերը լոկ Հայերուն չարիքներ կը հասցնեն: »

— ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ — Երեք տարի այսինքն ճիշդ 968 օր տեղ պատերազմէ մ'ետքը, հաշտութեան դաշնագիրը կնքուեցաւ Մայիս 31ին, Անգլիոյ ու Պօէրներուն միջև:

ՕՐԱՆԺԻԷ ԹՐԱՆՍՎԱՍԿԻ երկու հանրապետութիւնները շնչուեցան. պօէրները զոհացուցիչ ու նպաստաւոր պայմաններով զէնքերնին վար դրին ու անձնատուր եղան: Պատմութեան մէջ մնաց անշնչելի Պօէրներուն դիւցազնութիւնը:

Անգլիան գրեթէ հասաւ իր նպատակին սպառելով 222 միլիոն 974000 անգլ. ոսկիի ահագին դումարը, նաեւ զոհելով պատերազմի դաշտին վրայ ու հիւանդանոցներու մէջ մեռած 1027 սպաներ ու 20000 զօրք, ընդ ամենը 21,536 մարդ:

— ԱՆԿԼՕ-ՊՕԷՐԱԿԱՆ պատերազմին մեծ թուականները, որոնք նշանաւոր եղան պատերազմին փուլերուն մէջ.

9 Հոկտ. 1899. Թրանսվալ վերջնադիրը զրկեց.

†

10 Հոկտ. Պուրկերները զենքի կան-
չող յայտարարութիւնը:

12 Հոկտ. Բրիտանական գործա-
կալը Բրէտանիան թողուց ելաւ: Նա-
թալի արշաւանքը:

20 Հոկտ. Առաջին պատերազմներն
ի Կէնքո, ուր անգլիացի Սիմոնս զօ-
րավարը սպանուեցաւ, և յէլէնսլա-
ակդ: Պօէրները գրաւեցին Լէյտըս-
միթը:

28 Հոկտ. Մէյֆրինկ պաշարուեցաւ
Պօէրներէն, որոնք գրաւեցին Վրիպուր-
կը, ասոնք իրենց երկրին կցեցին Պէ-
շուէնէլէնտն ու Կրիքուալէնտը:

30 Հոկտ. Անգլիական զօրագունդ
մ'անձնատուր կ'ըլլայ Նիքոլսըն:

2 Նոյ. Պօէրներուն յաղթութիւն-
ները Ռըտվերս Պըլլըր զօրավարին վը-
րայ ի Գօլէնսօ ու Թուկէլայի վրայ:

18 Նոյ. Բաբի գաղթականու-
թեան առշաւանքը:

28 Նոյ. Լորտ Միթուըն Մօտտըրի
անցքը կը ստիպէ:

11 Փետր. 1900 Լորտ Ռօպէրտսի
ժամանումը գործողութեանց թատրին
վրայ:

16 Փետր. Պօէրներէն պաշարուած
Բէմպըրլէյի ազատուիլը:

27 Փետր. Գրօնօէի անձնատու-
թիւնն ի Բարտըպէրկ, 4000 Պուրկըր-
ներու հետ:

1 Մարտ. Պօէրները կը վերցնեն
Լէյտսմիթի պաշարումը ու Նաթալը կը
պարպեն:

14 Մարտ. Անգլիական բանակին
մուտքն ի Պըմֆօնդէյն, Օրանթի մայ-
րաքաղաքը:

5 Յունիս. Լորտ Բոպէրտսի մուտ-
քըն ի Բրէտանիա, Թրանսվաալի մայ-
րաքաղաքը:

11 Սեպտ. Նախագահ Բրուկէրին
մեկնումն ի Լօրէնսօ - Մարքէզ:

Յունիսէն սկսեալ, Պօէր գօմանսօ-
ները փոքր փոքր կուխներու պատե-
րազմներ կը կազմակերպեն, ու գրեթէ
ամեն շաբաթ Պօթայի, Տը Ուէզի ու
Տըլէրիի յանդուգն յարձակումովը նը-
շանաւոր կը հանդիսանայ մինչև Լորտ
Միթուընի ու անգլիական զօրագնդի
մը գերութիւնը (7 Մարտ 1902):

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդգէմ հրդեհի:

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդգէմ հրդեհի ինչպէս
նաև Մովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել տու Ընդհանուր Գործակալ եւ Լիսպօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփասանորիս, պզտիկ Մեկնչիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ըն-
կերութիւն:

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ